

## ԴՐՈՒԱԳ 2.

### Անտիոքեան խնդիրն: Պաշտպանել Լեւոնի եւ իշխանացուցանել զՌուբէն-Ռեմունդ

Պատմեցաք ՚ի վեր անդր զերդմնակոռ պայման ապագայ պայազատութեան թողին Բրնձին Անտիոքայ՝ ըմբռնելոյ ՚ի Լեւոնէ, եթէ ընծայեցի զաւակ արու յորդոյ նորա եւ յԱլիծայ դստերէ Ռուբինի Բ, որպէս եւ եղեն. եւ յետ ոչ բազմաց հայր երախային Ռեմունդ՝ ժառանգն Անտիոքայ՝ մեռաւ տարածամ (1198). ըստ ոմանց՝ մոլեգնութեան ախտիւ հարեալ, եւ ըստ այլոց՝ յիւսայելացի դաւաճանաց վիրաւորեալ ՚ի մահ. բայց մինչ չեւ էր հասեալ ՚ի շունչ վախճանին՝ կոչեաց զհայր իւր ծերունի (Պեմունդ Գ), եւ միւսանգամ երդմնեցոյց ըստ նախ եղելոյ ուխտին՝ նստուցանել յաթոռ իւր զորդեակն դեռաբուսիկ. զոր եւ պատուիրեաց կոչել զուզապէս յանուն իւր եւ ՚ի մայրենի հաւուն՝ *Ռուբէն-Ռեմունդ*. եւ ծերն յօժարութեամբ ընկալեալ՝ յաջորդ իւր զնա հոչակեր, եւ տայր երդնուլ յիւրայոցն զերդումն հաւատարմութեան կամ լճութեան նմա, յետ մահուան իւրոյ. եւ կնքեալ զայս ուխտ վաւերական՝ յանձնէր ՚ի Լեւոն: Այլ որդի նորա կրսեր եւ համանուն՝ *Պեմունդ*, որ արդէն յափշտակեալ էր զկէս իշխանութեան նորին, եւ անուանէր *Կոմս Տրիպոլսի*, աչօքն՝ վասն որոյ եւ կոչմամբ՝ *Միականի* (Le Borgne), այլ մտօք չարաչար սրատես, խանդացեալ ընդ բարգաւաճանս Լեւոնի այն ինչ թագաւորեցելոյ եւ յամենեցուն մեծարելոյ, որում պարտական եղեւ պատուադրութեան՝ հայր իւր եւ ամենայն երկիրն Անտիոքայ, խոկայր եւ կասկածէր՝ թէ ՚ի մեռանել հօրն, անշուշտ ժառանգին՝ Ռուբինի տղայոյ՝ պայլ եւ ինսամակալ լիցի հայրագիր նորին Լեւոն, եւ ընդ ձեռամբ իւրով արկցէ՝ զէթ ընդ երկար ամս՝ զամենայն իշխանութիւնն. եւ եթէ անուամբ ոչ՝ այլ իսկապէս նա լիցի Բրինձ Անտիոքայ, եւ թերեւս եղջիւր աճցէ իշխանութեանց արեւմտից՝ որ յայսկոյս ծովու. ապա հարկ համարէր կանխել զառաջս առնուլ վտանգին: Եւ զի այր խստասիրտ էր եւ իշխանութեան սիրող՝ ոչ պակաս քան զԼեւոն, չէառակն եւ հայրենի հնացեալ ալեացն. տեսեալ զնա հլու եւ հաւատարիմ իրաւանց անդրանկանն եւ շառաւեղի նորին, արար իւր համախոհս եւ անկուշեաց ծնողին, մերժեալ ընկեց ՚ի գահէն, եւ համբաւեաց զինքն